ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲԵՌԼԻՆՅԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ս. Ս. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հայերի ցեղասպանության վերաբերյալ փաստաթղթերի և վկայությունների բազմաթիվ ժողովածուներ ու գիտահետազոտական աշխատություններ են հրապարակվել աշխարհի տարբեր լեզուներով, սակայն դրանց մեջ անգնահատելի են Բեռլինի հանրահայտ դատավարության սղագրությունն ու նրա հետ կապված փաստագրական նյութերը։

Հարկ է ասել որ դատավարության նյութերը առաջին անգամ հրատարակվել են գերմաներեն, 1921 թ., Բեռլինում՝ «Թալեաթ փաշայի դատավարությունը» վերնագրով։ Նույն թվականին լույս է տեսել հայերեն թարգմանությունը, որն ունեցել է մի քանի հրատարակություն, սակայն զարմանալիորեն հայոց ցեղասպանության այդ վավերագիրը հիմնականում վերնագրվել է ոչ թե «Թալեաթ փաշայի դատավարություն», այլ «Սողոմոն Թեհլիրյանի դատավարություն»։ Գերմաներեն հրատարակության վերնագիրը միանգամայն ճշմարտացի է, քանզի 1921 թ. հունիսի 2—3-ին տեղի ունեցած դատավարությունում դատապարտվեց եղեռնի գլխավոր կազմակերպիչը՝ Թալեաթը, իսկ ժողովրդական վրիժառու Ս. Թեհլիրյանը հանդես եկավ մեղադրողի դերում։ Բացի այդ, հայերեն հրատարակությունը չունի ոչ մի առաջաբան, մինչդեռ գերմաներեն առաջին հրատարակության առաջաբանը գրել է ցեղասպանության ականատես, մեծ հումանիստ Ա. Վեգները, որը համակողմանի վերլուծության է ենթարկել իրադարձությունների ամբողջ ընթացքը։ Հայերեն հրատարակության մեջ չեն մտցված Թալեաթ փաշայի այն բոլոր հրամանագրերը, որոնք անմիջականորեն վերաբերում են արևմտահայության տեղահանությանն ու ցեղասպանությանը։ Այնտեղ զետեղված չէ նաև գերմաներեն հրատարակության հավելվածը, որի նյութերը նույնպես հետաքրքրություն են ներկայացնում։ 15 տարի առաջ, 1980 թ. Գետինգենում լույս տեսավ գերմաներեն վերջին հրատարակությունը, որի համար նոր առաջաբան է գրել հայոց ցեղասպանության պատմության նշանավոր մասնագետ Թ. Հոֆմանը։

Հարկ է ասել, որ տողերիս հեղինակի ջանքերի համեստ շրջանակներում կազմվեց, խմբագրվեց, ծավալուն առաջաբանով, ծանոթագրություններով, լուսանկարներով ու քարտեզով Մոսկվայում, առաջին անգամ ռուսերեն հրատարակվեց Հայոց ցեղասպանության այդ արժեքավոր ու հավաստի վավերագիրը։

Անչափ կարևոր է, որ հայոց ցեղասպանության ականատես, գերմանացի գրող ու մեծ հումանիստ Ա. Վեգները բեռլինյան դատավարության ժամանակ հանդես եկավ որպես վկա և երդվյալ ատենակալներին առաջարկեց ցուցադրել իր իսկ նկարահանած հայկական կոտորածների ու տեղահանության ողբերգական պատկերները։ Բացի դրանից, հայերի ցեղասպանության վերաբերյալ Ա. Վեգների վկայությունները համառոտ ու պատկերավոր ձևով շարադրված են 1921 թ. հրատարակված «Թալեաթ փաշայի դատավարությունը» սղագրության առաջաբանում։ Այնտեղ նա նշել է. «Հայ ժողովրդի ողբերգությունն աննախադեպ իրադարձություն էր այդ պատերազմում և թերևս, մարդկության ամբողջ պատմության մեջ։ Կատարված հանցագործությունն այնքան հրեշավոր է, որ նրա արձագանքները ցնցեցին նույնիսկ պատերազմի ժամանակներում ու տարածվեցին բոլոր երկրներում... Եվ ահա հայ անհայտ ուսանողի ատրճանակի կրակոցը, որն սպանեց Թուրքիայի ներքին գործերի նախկին նախարարին ու դրա հետ կապված դատավարությունը ամբողջ աշ-

խարհի ե նաև գերմանական ժողովրդի ուշադրությունը սևեռեցին համաշխարհային պատերազմի ամենաարյունալի էջին, ակնհայտ դարձավ ճշմարտությունը՝ երիտթուրքական կառավարության կողմից մի ամբողջ ժողովրդի ծրագրավորված բնաջնջումը։ Իրադարձությունների զարմանալի հորձանուտում տեղի ունեցավ այն, որ փաստերի ծանրության տակ տառապող ու լոակյաց ղոհը ակամայից դարձավ մեղադրող և մեղադրյալի աթոռին այլևս չկա Սողոմոն Թեհլիրյան, այլ կա արյունաշաղախ ննջեցյալի ստվերը, այնպիսի խորհրդավոր իրավիճակի խորիմաստ հաստատում, երբ մեղավորը ոչ թե սպանողն է, այլ սպանվածը»[1]։

Ա. Վեգները հավաստի փաստերով ցույց է տվել, որ երիտթուրքական ոճրագործների կազմակերպած և իրագործած ցեղասպանության հետևանքն այն եղավ, որ բնաջնջվեց այն ժամանակվա հայ «ժողովրդի շուրջ կեսը, որը կարծես թե բարձրանում էր գերեզմանից և իր մոխրացած ձեռքերը կարկառում էր պատերազմի սարսափների, դահճի դաժանությունների դեմ, ու դատարանի ամբիոնից մի անգամ ևս ի լուր աշխարհի բացականչում էր աննկարագրելի ողբերգության մասին»[2]։

Ներկայանալով բեռլինյան դատավարություն, որպես հայերի ցեղասպանության ու թուրքական ոճրագործությունների ականատես, Ա. Վեգները մատնանշել է, որ իր վկայությունները ինչպիսիք ու որքան էլ լինեին, միայն մասնիկներ կարող էին կազմել տեղի ունեցած աննախադեպ ու սարսափելի իրողության մեջ։ Բնութագրելով բեռլինյան դատավարությունը, Ա. Վեգները այն կարծիքն է հայտնել, որ իր առանձնահատկությամբ, և որ գլխավորն է՝ ընդունած արդարացի վճռով, այն համաշխարհային պատմական նշանակություն ունի։ «Թալեաթի հանցագործությունն այնքան սարսափելի էր,—գրել է նա,—որ սպանողի արարքը, որը որպես արյան վրեժ, բռնության գործողություն, մենք, բնականորեն մերժում ու ցավում ենք, այդուհանդերձ, մեզ թվում է փրկության միջոց, որով խիզախ էակը սեփական ուժերով ազատագրում է իրեն։ Այո, ես այն կարծիքին եմ... որ գա պատմության կամքն էր, երբ զոհերից մեկի ձեռքերով սպանվեց Թալեաթը»[3]։ Ա. Վեգների պատկերավոր խոսքերով «Ինքը՝ Սողոմոն Թեհլիրյանը, միայն խորհրդանիշ էր, մի հյուլե, որի մեջ խտացված ու ցայտուն արտացոլված էին հայ ժողովրդի վերոկները, նրա ազգային ցավը, խիզախ ինքնապաշտպանությամբ արդարացի հաստատման նրա տենչը»[4]։ Եվ ահա հյուլեն պայթեց ու դատավարությունների համաշխարհային պատմության մեջ առաջին անգամ մեղադրյալի դերում սպանվածն էր, իսկ գլխավոր մեղադրողը սպանողն էր։ Եվ բնականորեն, այդ արդարացի դատը պատմության մեջ մտավ որպես ոչ թե Ս. Թեհլիրյանի, այլ՝ Թալեաթ փաշայի դատավարություն։

Ա. Վեգները իր ուսումնասիրությունների ու քաղաքագիտական վերլուծությունների հիման վրա այն հետևությունն է արել, որ հայերի ցեղասպանությունը ծրագրված էր վաղօրոք «Իթթիհատ վե Թերաքքը» կազմակերպության կողմից։ Այդ հրեշավոր ծրագիրը իրագործեց գործադիր իշխանությունը, որի գլխավոր դեմքը ներքին գործերի նախարար Թալեաթ փաշան էր։

Ա. Վեգները հաստատակամորեն մերկացնում է թուրքական իշխանությունների բոլոր տեսակի պատճառաբանությունները հայերի ցեղասպանության և ֆիզիկական բնաջնջման հարցում։ Նա հատկապես բացահայտորեն անհիմն է համարում «ռազմական անհրաժեշտությամբ» հայերի տեղահանության վարկածը։ Այդ կապակցությամբ նա գրել է. «Ինչպե՞ս բացատրել արևմտաանատոլիական վիլայեթներից հայ բնակչության բռնի տեղահանու-

---

[1] Der Prozeß Talaat Pascha. Stenographischer Prozeßbericht mit einem Vorwort von Armin T. Wegner und einem Anhang, Berlin, 1921, S. VII.

[2] Նույն տեղում, էջ VII։

[3] Նույն տեղում, էջ VIII։

[4] Նույն տեղում, էջ VII։

թյունը, որտեղ հայերի հույժ փոքրամասնությունը որևէ վտանգ չէր կարող ներկայացնել, չէ՞ որ նրանք ապրում ու աշխատում էին ռազմական գործողություններից հարյուրավոր մղոններ հեռու։ Մի՞թե հայտնի չէ ամերիկյան դեսպան Մորգենթաուի առաջարկությունը տեղահանվող հայերին Ամերիկա վերաբնակեցնելու մասին։ Հայտնի է նաև այն փաստը, որ թուրքական կառավարությունը ոչ միայն մերժեց այդ առաջարկությունը, այլ դրանով հաստատեց, որ այսպես կոչված ռազմական անհրաժեշտությամբ պայմանավորված այդ միջոցառումը միայն պատրվակ էր, որպեսզի քողարկվեր դարի հանցագործությունը՝ աշխատասեր ու բարձր մշակույթի տեր մի ամբողջ ժողովրդի լրիվ ոչնչացումը»[5]։

Ա. Վեգները հերքում է նաև ցեղասպանության՝ կրոնական պատճառաբանություններով պայմանավորվածությունը։

«Թալեաթ փաշայի դատավարության» գլխավորներն երկրորդ հրատարակության համար գրած իր առաջաբանում Թ. Հոֆմանը իրավացիորեն նշում է. «1921 թվականի հունիսին Թեհլիրյանի գործով դատավարությունն ավարտվեց մեղադրյալի արդարացմամբ, որը մեծ հուզմունքով ու ծափահարություններով ընդունեցին դահլիճում ներկա գտնվածները։ Մահվան երթն ապրած ականատես հայերի՝ տիկին Թերզիրաշյանի, եպիսկոպոս Պալաքյանի, ինչպես նաև մեղադրյալի ցուցմունքները դատավարությունը վերածեցին զոհի՝ բյուրապատիկ մեղավոր Թալեաթի դեմ ուղղված մեղադրանքի։ Դրա հիման վրա էլ դատավարությունը կապվեց ոչ թե Թեհլիրյանի, այլ Թալեաթի անվան հետ և պատմության մեջ մտավ որպես «Թալեաթ փաշայի դատավարություն»[6]։

Թ. Հոֆմանը պատմական հավաստի իրողությունների հիման վրա ցույց է տալիս, որ հայերի ցեղասպանությունը տարերայնորեն սկսված գործողություն չէր, այլ ծրագրված ու մշակված քաղաքականության իրականացում։ Նա գրում է, որ ցեղասպանությունն սկսվել է 1915 թ. փետրվարին զինվորական ծառայության ենթակա հայ բնակչության զորակոչով։ Հերթական քայլը եղավ հայ զինվորների զինաթափումը և հարկադիր այնպիսի աշխատանքներում օգտագործելը, որոնց տաժանակիր պայմանները հանգեցնում էին զանգվածային մահացության, իսկ եթե կենդանի էին մնում, ապա սպանվում էին թուրքական հատուկ ջոկատների կողմից։

Դրանից հետո, 1915 թ. ապրիլի 24-ին Կոստանդնուպոլսում բանտարկվում են 600 նշանավոր հայ մտավորականներ, որոնցից կենդանի մնաց 15 մարդ։ Այդ բոլոր չարանենգ գործողությունների նպատակն էր հայ բնակչությանը զրկել ինքնապաշտպանությունից։ Անզեն բնակչության զանգվածային և աննախադեպ կոտորածները երիտթուրքական պարագլուխները աշխարհին ներկայացնում էին որպես տեղահանություն։

Թ. Հոֆմանը կարևորագույն եզրահանգման է գալիս, որի իմաստը հետևյալն է. «բոլոր դեպքերում այսօր հայկական ճակատագիրը, ըստ երևույթին, կրում է համաշխարհային հասարակայնության մոռացկոտ հիշողության կնիքը, որը դրանով նպաստել և շարունակում է նպաստել ապագա բոլոր ցեղասպանություններին»[7]։

Այդ կապակցությամբ նա մեջբերում է Թալեաթի հոգևոր ժառանգորդ Ա. Հիտլերի այն խոսքերը, որոնք ասվել են 1939 թ. օգոստոսի 22-ին. «Ես հրաման եմ տվել... այն մասին, որ պատերազմի նպատակը ոչ թե որոշակի սահմանագծերի նվաճումն է, այլ հակառակորդի ֆիզիկական բնաջնջումը։ Այսպես, ես... հրամայել եմ իմ ՍՍ ընտիր զորամասերին անխնա, առանց խղճահարության ոչնչացնել լեհական ծագումով տղամարդկանց, կանանց ու

---

5 Նույն տեղում, էջ IX։

6 Der Völkermord an den Armeniern vor Gericht. Der Prozeß Talaat Pascha. Gesellschaft fur befrohte Völker, Göttingen, 1980, S. 4.

7 Նույն տեղում, էջ 5։

երևիանների։ Միայն այդպես մենք կարող ենք մեզ անհրաժեշտ կենսատարածք նվաճել։ Ո՞վ է այսօր հիշում հայերի բնաջնջումը»[8]։

Հայերի ցեղասպանության ուսումնասիրությունների հիման վրա Թ. Հոֆմանը այն կարծիքն է հայտնում, որ բեռլինյան դատավարության սղագրության և դրան առնչվող փաստաթղթերի ու նյութերի հրապարակումն ու վերծանումը ոչ միայն վերակենդանացնում են մարդկության հիշողությունը 20-րդ դարի առաջին մեծագույն ողբերգության մասին, այլ նաև պատմական դասեր են նոր ցեղասպանությունների կանխման գործում։ Այդ տեսանկյունից կարևորվում է նաև ռուսերեն առաջին հրատարակությունը, որի առաջաբանում տրված են հայոց ցեղասպանության համառոտ պատմությունը և Ս. Թեհլիրյանի անցած ուղին։ Բերված են մի շարք մանրամասներ, որոնք հայտնի չեն եղել ռուս, հայ և այլ լեզուներով ընթերցողներին։ Դրանք գերմանական արխիվներում ու գրադարաններում կատարված ուսումնասիրությունների արդյունքներն են։ Այժմ անցնենք բեռլինյան դատավարության հետ կապված մի քանի հանգամանքներին։

Հարկ է ասել, որ դատարանի կազմը բաղկացած էր այն ժամանակվա Գերմանիայի բարձրորակ և փորձառու իրավաբաններից։ Նախագահողը օկրուգային դատարանի նախագահ դոկտոր Լեմբերգն էր, պաշտոնական տեղակալողը՝ դատախազ Գոլնիկը։ Որպես երդվյալ ատենակալներ հանդես էին գալիս Բեռլինի տարբեր շրջանների 14 ներկայացուցիչներ։ Դատապաշտպաններ երեքն էին. արդարադատության գաղտնի խորհրդական, դոկտոր Ադոլֆ ֆոն Գորդոնը, արդարադատության խորհրդական Իոհաննես Վերտհաուերը և կառավարական գաղտնի խորհրդական, Քիլի համալսարանի իրավունքի պրոֆեսոր, դոկտոր Նիմայերը։

Թարգմանիչները երկուսն էին. Վահան Զաքարյանը և Գևորգ Գալստյանը։ Վկաների թիվը բավական մեծ էր՝ տարբեր բնագավառների ավելի քան 20 ներկայացուցիչներ, որոնց մեջ նշված էր նաև տիկին Թալեաթը։ Դատաբանում որպես վկաներ հանդես եկան Թերզիբաշյան ամուսինները, գրող Արամ Անտոնյանը, եպիսկոպոս Գրիգորիս Պալաբյանը և ուրիշներ։

Դատավարության նիստերին մասնակցում էին մի շարք փորձագետներ, որոնց մեջ ամենահավաստի և ազդեցիկ փաստարկներով հանդես եկավ հումանիստ և հայասեր հարցի գիտակ դոկտոր Յոհաննես Լեփսիուսը։ Հետաքրքրություն էին ներկայացնում նաև գեներալ Լիման ֆոն Զանդերսի ցուցմունքը։ Նա պատերազմի նախօրյակին և ընթացքում, շուրջ հինգ տարի աշխատում էր Թուրքիայում, գլխավորում էր գերմանական զինվորական միսիան և հայկական կոտորածների ականատեսն էր։ Փորձագետների մեջ էին նաև պրոֆեսորներ Կասիրեր Ֆյորստերը, դոկտոր Շտյորմերը, գաղտնի խորհրդական Լիմանը և ուրիշներ։ Որպես փորձագետ պետք է հանդես գար նաև պատերազմի ժամանակ Հալեպի գերմանական հյուպատոս Ռյոսլերը, սակայն արտաքին գործերի նախարարությունը արգելեց նրա մասնակցությունը։

Դատավարության առաջին նիստի սկզբում նախագահի այն հարցին, թե հայերի կոտորածները սկսվել են անսպասելիորեն, իսկ եթե ոչ, ապա, դրանք տեղ գտե՞լ են առաջներում, Ս. Թեհլիրյանը պատասխանել է, որ կոտորածները տեղի են ունեցել վաղուց ի վեր։ Նրա ծնողները պատմել են, որ կոտորածներ տեղի են ունեցել մշտապես»։ Նա նշել է, որ, օրինակ, դեռևս 1894 թվականին իր ծննդավայրում սարսափելի կոտորածներ են եղել։ Ինչ վերաբերում է 1915 թվականին, ապա Ս. Թեհլիրյանը հայտարարեց, որ տարիներ շարունակ երզնկացիները գտնվել են սարսափի ու տագնապի պայմաններում։ Նա պատմում է, որ երբ սկսվեց պատերազմը, Երզնկայի հայ երիտասարդությունը զորակոչվեց բանակ, իսկ մնացած բնակիչներին հավաքեցին

[8] „Akte für deutschen auswärtigen Politik. 1919—1945, Serie D. VII, Nr. 193, S. 171, Anm. 1.

ե ուղարկեցին անհայտ ուղղությամբ։ Հեռագրերից մեկում տեղեկացվում էր, որ բոլոր տեղահանվածներից կենդանի է մնացել միայն մեկը՝ Մարտիրոսյան ազգանունով։

Դատարանում Ս. Թեհլիրյանին տրված հարցերի պարզ ու հստակ պատասխաններում արտացոլված է այն ողբերգությունը, թուրքական իշխանությունների իրագործած այն բարբարոսություններն ու վայրագությունները, որոնք բաժին ընկան արևմտահայությանը[9]։

Նրա աչքերի առջև կոտորում են իր հարազատներին և հրաշքով փրկվելով՝ նա հեռանում է լեռները և հայտնվում մի քրդական գյուղում։

Սպանության հաջորդ օրը՝ մարտի 16-ին, «Բեռլիներ լոկալանցայգեր» լրագիրը կատարված դեպքի մասին գրում է. «Սպանվածը Ալի Սայի բեյ անվան տակ Բեռլինում բնակված ոչ անհայտ թուրքական նախկին պրեսավոր վեզիր Թալեաթ փաշան էր։ Նա Բեռլին էր ժամանել 1919 թվականի հոկտեմբերին, Շառլոտենբուրգի ոստիկանական վարչությունում գրանցվել էր վերոհիշյալ կեղծ անունով և իր տիկնոջ հետ վարձել էր Հարդենբերգ փողոցի իր սենյականոց թիվ 4 առանձնատունը։ Հրապարակներին նա հազվադեպ էր հանդես գալիս իր իսկական անունով և միայն նրա ամենամերձավոր հայրենակիցները գիտեին նրան որպես նախկին թուրքական պետական գործչի։ Երեկ ցերեկվա ժամը 11-ին Թալեաթ փաշան դուրս էր եկել դրոսանքի և Հարդենբերգ փողոցի իր տնից մոտավորապես 200 մետր հեռու նրան դիմում է մի երիտասարդ, ձեռքով նրա ուսին խփում որպես մոտիկ ծանոթի։ Թալեաթը շրջվում է և ընդհուպ մոտենում ցանկապատին։ Հենց այդ պահին հանցագործը հանում է պարաբելլում ատրճանակը և կրակում գլխավոր վեզիրի վրա։ Գնդակը կպնում է նրա ծոծրակին և դուրս գալիս ձախ աչքից։ Այնուհետև գնդակը դիպչելով պատին անդրադարձ թռիչքով հայտնվում է աջ աչքում։ Թալեաթը անկենդան վայր է ընկնում։ Սպանողը ձերբակալվում է, իսկ այնուհետև հասցվում Մոմսենվախի ոստիկանական բաժանմունք։ Ատրճանակում գտնվել է ևս 8 գնդակ։ Դիակը դեպքի վայրից տարվում է կենդանաբանական այգուց ոչ հեռու գտնվող շտապ օգնության տեղամաս, ուր անմիջապես ժամանում են սպանության վերաբերյալ գործերի հետաքննող հանձնաժողովի աշխատակիցները։ Հայտնաբերված փաստաթղթերում նշված էր սպանվածի միայն կեղծ անունը։ Նրա մոտ եղած էր մոտ 1200 մարկ։

Թալեաթի կինը, որը պատահարի ժամանակ գտնվում էր բնակարանում, ամուսնու մահվան լուրն ստանալուն պես ուշագնաց է լինում և այդ պատճառով էլ կատարվածի պարզաբանման համար չէր կարող հարցաքննվել։

Հանցագործը երեկ օրվա երկրորդ կեսին հարցաքննվել է Շառլոտենբուրգի ոստիկանական բաժանմունքում։ Նա գերմաներենին չի տիրապետում և գերմաներեն առանձին բառերի օգնությամբ դժվարությամբ է կարողանում բացատրվել։ Նրա պարզորոշ արտահայտություններից, սակայն, կարելի է եզրակացնել, որ նա սպանությունը կատարել է քաղաքական դրդապատճառներով։ Նա հայ ուսանող Սողոմոն Թեհլիրյանն է։ Նա հայտարարել է, որ արյան վրիժառության կողմնակից է։ Նա պնդում է, որ Թալեաթի հրամանով սպանվել են իր ծնողները և այդ պատճառով էլ երկար տարիներ հետամուտ է եղել նրան, որպեսզի վրեժ լուծի։ Վերջապես նա պարզել է, որ Թալեաթը գտնվում է Բեռլինում և որոշել է այնտեղ սպանել նրան։ Ընթացիկ տարվա հունվարին Թեհլիրյանը ժնևից ժամանում է Շառլոտենբուրգ։ Նրա անձնագրում վիզան դրված է Փարիզում։ Իր մոտ եղել է մոտ 11000 մարկ։ Գործի հանգամանքները լիովին կարելի է պարզել թուրքերենի թարգմանչի միջոցով հարցաքննության դեպքում։ Ձերբակալման ժամանակ հանցագործը այնպես է բաշխվել ու ծնծվել, որ գլխի վրա դդալի վերքեր են գոյացել։

---

[9] Судебный процесс Талаата паши. Стенографический отчет. М., 1992. с. 70—71.

Գերմանիայի նկատմամբ իր բարեկամական քաղաքականությամբ Թալեաթ փաշան արժանացել է Բեռլինյան քաղաքական շրջանների մեծ հարգանքին....

Իր կարիերան նա սկսել է կապի ասպարեզի ծառայողից և ոչ շատ տարիներ անց, չնայած ոչ բավարար քաղաքական կրթությանը, երիտթուրքերի կառավարության մեջ զբաղեցրել է մի շարք նախարարական պաշտոններ և երբ դարձավ ներքին գործերի նախարար, դրանից հետո հաջողվեց գրավել նաև գլխավոր վեզիրի պաշտոնը։ 1908 թվականին ինքնակալությունից Թուրքիայի ազատագրության պայքարի օրերին նրա և Էնվեր փաշայի անունները ամենահամբավավորներն էին։ Այն ժամանակ, երբ Էնվեր փաշան իրականացնում էր ռազմական ղեկավարությունը, Թալեաթը հանդիսանում էր ապստամբության քաղաքական առաջնորդը և հայերի նկատմամբ իր անհամար դաժանություններով հռչակ էր ձեռք բերել։ Թուրքիան վաղուց էր տառապում շարքային պաշտոնյաների ապաշնորհությամբ և Թալեաթը հազիվ թե մտադիր էր օգտագործել նրանց անընդունակությունն ու խեղությունը։ Այնուհանդերձ նրա հրամանները դժվար էր կեղծ ձևով մեկնաբանել, և նա ամեն ինչ անում էր, որպեսզի ստորին օղակներին տրամադրեր հայ բնակչության դեմ, և պաշտոնյաները իրենց հերթին այնպես էին վարվում հայերի հետ, որ քրիստոնյաների հետապնդման նողկալի արարքները մթագնում էին դրանց առջև։ Հազարավոր հայերի քշում էին անապատներ, որտեղ նրանք մահանում էին սովից։ Մոսուլից մինչև Բաղդադ ընկած ճանապարհը և շատ ուրիշ տարածքներ ծածկվում էին հայերի դիակներով։ Առանց որևէ պատճառների նրանց ղրկում էին տներից և նետում բախտի քմահաճույքին։ Այստեղից էլ պարզ է, եթե դա ընկալվի հայերի տեսանկյունից, նրանց արդարացի ատելությունը Թալեաթ փաշայի նկատմամբ, բնավ տարակուսանք չի առաջացնում, որ նրա սպանությունը հանդիսանում է քաղաքական նկատառումներով բացահայտ վրիժառության ակտ»[10]։

Ինչպես հայտնի է, 1919 թվականի հուլիսի 5-ին Կոստանդնուպոլսի զինվորական դատարանի որոշմամբ մահապատժի դատապարտվեցին արևմտահայության բնաջնջման գլխավոր մեղավորներ Թալեաթը, Էնվերը, Ջեմալը և Նազիմը։ Նրանց նկատմամբ ներկայացված մեղադրանքը բաղկացած էր հինգ կետից, որոնցից առաջինը վերաբերում էր հայերի ցեղասպանության համար պատասխանատվություն կրելուն։

Վերադառնալով բեռլինյան դատավարությանը, հարկ է ասել, որ վկաներից Թերզիբաշյանը պատասխանելով հայերի կոտորածների վերաբերյալ հարցին մատնանշում է, որ օրինակ, իր բոլոր հարազատներն ու ծանոթները թուրքական զինվորականների կողմից սպանվել են հայրենի քաղաք Էրզրումում[11]։

Դատարանում հետաքրքիր ցուցումներ է տալիս նրա կինը՝ Քրիստինե Թերզիբաշյանը։ Որպես վկա նա պատմում է, որ 1915 թվականի հուլիսին թուրքական զինվորականները հավաքում են իր հայրենի քաղաքի՝ Էրզրումի բոլոր հայ բնակիչներին և պարտադրում, որ նրանք պետք է աքսորվեն այլ վայրեր։ Պատճառաբանությունն այն էր, որ քաղաքը ռազմաճակատի սահմանագծում է։

Ք. Թերզիբաշյանի վկայությամբ Էրզրումի հայությունը բաժանվում է չորս խմբի և արտաքսվում զանազան ուղղություններով։ Ամուսիններ Թերզիբաշյանների 21 հոգուց բաղկացած ընտանիքից պատահաբար կենդանի են մնում միայն երեքը։

Դատավարությունում մեծ տպավորություն թողեց գերմանացի մեծ գիտնական, հայագետ, հումանիստ, Հայկական հարցի փորձագետ Յոհաննես

---

[10] „Der christliche Orient", 1921, Berlin, № 1—3, S. 14.

[11] Судебный процесс Талаата паши. Стенографический отчет, с. 130.

Լեփսիուսը։ Նա հավաստի փաստերի հիման վրա բացահայտեց ինչպես Արդուլ Համիդ 2-րդի, այնպես էլ երիտթուրքերի մշակված ցեղասպանության նողկալի ծրագիրը և դրա իրագործման բարբարոսական եղանակները։ Մասնավորապես նա հայտարարեց, որ «տեղահանության մասին որոշումը ընդունվել էր երիտթուրքական կոմիտեի կողմից, իսկ հրամաններն արձակում էին ներքին գործերի նախարար Թալեաթ փաշան և ոստիկական նախարար Էնվեր փաշան։ Թալեաթի ստորագրած հրամաններից մեկում կա այսպիսի բայաարություն. «տեղահանությունը դա բնաջնջում է»։ Այդ հրամանի համապատասխան էլ իրականացվում էին գործողությունները և Արևելյան Անատոլիայի նահանգներից տեղահանվածների միայն 10 տոկոսը հասավ աքսորավայր, մնացած 90 տոկոսը սպանվեց ճանապարհին»[12]։

Բնութագրելով Հայկական հարցը, Յո. Լեփսիուսը դատարանում հայտարարեց. «Հայկական հարցը ինքնարույս ծառ չէ։ Այն եվրոպական դիվանագիտության պտուղն է... Դիվանագիտական շախմատային խաղում... հայը հանդիսացել է զինվոր, որին մերթ առաջ են մղել, մերթ ղեհաբերել։ Մարդասիրության պատճառաբանություններն ու «քրիստոնեական հովանավորությունը» միայն դիմակ էին»[13]։

Լեփսիուսի փաստարկումների հիման վրա դատապաշտպան Նիմայերը հետևյալ եզրահանգումն է անում. «Հայությունը նվաճված վերջին քրիստոնյա ժողովուրդն էր, որի տարածքը Թուրքիան համարում էր զավթած։ Բալկանյան բոլոր ժողովուրդները, որոնք Թուրքիայի ճնշման տակ էին, ազատագրվեցին թուրքական լծից և որպեսզի հայերը նույնը չանեին, որոշվեց բնաջնջել նրանց»[14]։

Դատարանին ներկայացավ և իր խոսքն ասաց Թուրքիայում գերմանական զինվորական միսիայի ղեկավար (պատերազմի ժամանակ) գեներալ Լիման ֆոն Զանդերսը։ Նա նշեց, որ ամենից առաջ հայերի տեղահանության պատասխանատվությունը լիովին ընկնում է երիտթուրքական կառավարության վրա։ Երկրորդ, սկզբից եթե հայերը դիմեցին ինքնապաշտպանության, չէին ցանկանում ենթարկվել թուրքական կառավարության հրամաններին՝ զենքը հանձնելու վերաբերյալ և նրանց մի մասը հանդես գալով ռուսների կողմը, պայքարում էր Թուրքիայի դեմ։ Այդ պաշտպանական մարտերը, գեներալի կարծիքով, նախադուռ հանդիսացան կոտորածների համար։ Նրա ելույթի նպատակը մեկն էր՝ ըստ հնարավորին թեթեացնել և նույնիսկ գերմանական իշխանությունների վրայից հեռացնել հայերի ցեղասպանության հարցում նրանց մեղսակցությունը։ Մեղադրելով հիմնականում թուրքական զինվորականության ստորին օղակները, ենթադրաբար նա պաշտպանության տակ վերցրեց Թալեաթին։ Գերմանացի գեներալի խորամանկությունն ու կեղծարարությունը բացահայտվեց հենց դատավարության նույն նիստում դատապաշտպան ֆոն Դորդոնի կողմից։ Նա հայտարարեց, որ Լիման ֆոն Զանդերսի միտումը թե հայերի նկատմամբ կատարված ջարդությունների մեղավորը ոչ թե Թալեաթն է, այլ ստորին իշխանությունները, նպատակ ունի թյուրիմացության մեջ գցել հասարակական կարծիքը[15]։ Նա որպես փաստարկ հիշեցնում է Թալեաթի մի քանի հեռագրերը։ Ահա դրանցից միայն երկուսը.

«Հայերի ապրելու և աշխատելու իրավունքը Թուրքիայում լիովին վերացված է։ Կառավարությունը, որն իր վրա է վերցնում այդ պատասխանատվությունը, հրամայում է օրորոցում չթողնել ոչ մի երեխայի»։

«Կառավարությունը որոշել է Թուրքիայում ապրող բոլոր հայերին լրիվ ոչնչացնել»։

---

12 Նույն տեղում, էջ 136—137։

13 Նույն տեղում, էջ 140—141։

14 Նույն տեղում, էջ 143։

15 Նույն տեղում, էջ 153։

Դատարանում որպես կոտորածների ականատես ու վկա հանդես եկավ հայ եպիսկոպոս Գրիգորիս Պալաքյանը։ Հետաքրքիր է, որ երբ Գ. Պալաքյանը պատահականորեն լինում է Կիլիկիայի փոխնահանգապետ Ասաֆ բեյի մոտ, վերջինս ցույց է տալիս հայերի տեղահանության մասին Թալեաթի ստորագրությամբ ստացած հրամանը, որի իմաստը ամփոփված էր մի քանի բառի մեջ. «Ինչո՞ւ եք սպասում։ Ոչնչացրեք նրանց»[16]։

Գ. Պալաքյանը դատարանում հրապարակում է 1915 թվականին Զանկրրում թուրք մայորի հետևյալ խոսքերը. «Ինչ որ չկարողացան անել մեր նախորդ բոլոր սուլթանները, մենք կատարեցինք երկու ամսվա ընթացքում՝ ոչնչացնելով մի ամբողջ պատմական ազգ»։ Դրանից հետո դատարանի նախագահը ավելացնում է. «Եվ իրականում, հենց այդպես է եղել։ 15 ամսվա ընթացքում Թալեաթի ձեռքերով ավելի շատ հայ է սպանվել, քան շատ տարիների ընթացքում»[17]։

Իր խոսքի վերջում դատախազ Գոլնիկը ասաց. «Մարդկության հայացքները սևեռված են մեր որոշմանը։ Ձեզ է սպասում մարդկության ղդացումների հետ համաձայնեցված արդարության լույսը»։ Դատապաշտպան Նիմայերը վերծանելով Ս. Թեհլիրյանի այն արտահայտությունը, որ սպանելով Թալեաթին, իր խիղճը հանգիստ է, ցույց է տալիս, որ նրա համար բարոյական և իրավական ճշմարտություններր միանշանակ են[18]։ Նիմայերը լիովին միանալով իր գործընկերոջ՝ մյուս պաշտպանի արդարացի հարցադրմանը հայտարարեց. «Դուք չեք կարող Թեհլիրյանին մեղավոր համարել։ Նա վարվել է այնպես, ինչպես պետք էր վարվել, արել է այն, ինչը չէր կարող չանել»[19]։ Ս. Թեհլիրյանի երեք պաշտպաններն էլ վճռականորեն պահանջեցին արդարացնել նրան։

Դատավարության նիստի վերջում երդվյալ ատենակալները խորհրդակցում են ուղիղ մեկ ժամ։ Եվ վերջապես գլխավոր ատենակալ Օտտո Ռայնիկեն հանդիսավորությամբ հրապարակում է դատավճիռը, որը ձևակերպված է այսպես. «Մեղավո՞ր է արդյոք Սողոմոն Թեհլիրյանը 1921 թվականի մարտի 15-ին Շառլոտենբուրգում Թալեաթ փաշա անունով մարդու կանխամտածված սպանության մեջ։ Ո՛չ»[20]։

Ավարտելով Բեռլինյան դատավարության համառոտ լուսաբանումը, հարկ է ասել նաև, որ հայերի ցեղասպանության և Թալեաթ փաշայի դաժանությունների մասին դատարանին ներկայացվել էին ականատեսների՝ դիվանագետների, զինվորականների, դրողների և այլ մասնագետների վկայություններ։

Փաստորեն, իրադարձությունների ականատեսների անհերքելի, կենդանի վկայություններով ու փաստաթղթերով հագեցված բեռլինյան դատավարությունը ցեղասպանության համառոտ ու հավաստի պատմությունն է։

ГЕНОЦИД АРМЯН II БЕРЛИНСКИЙ ПРОЦЕСС

С. С. СТЕПАНЯН

Резюме

Геноцид армян доказан неопровержимыми фактами и подлинными документами, изданными на разных языках мира. Величайший справедливый гнев, вызванный геноцидом, повлек за собой многочис-

16 Նույն տեղում, էջ 151։
17 Նույն տեղում, էջ 154։
18 Նույն տեղում, էջ 228։
19 Նույն տեղում, էջ 233։
20 Նույն տեղում, էջ 241։

ленные подвиги, совершенные армянскими народными мстителями. Самый значительный из них—убийство главного организатора геноцида армян, министра внутренних дел Турции Талаата-паши, совершенное 15 марта 1921 года в Берлине Согомоном Тейлиряном. 2—3 июня 1921 г. в Берлине состоялся судебный процесс. Судебный процесс против С. Тейлиряна фактически трансформировался в слушание дела против Талаата-паши и всех младотурецких главарей. В истории мировой юриспруденции впервые виновным признается не убийца, а убитый. Берлинский судебный процесс позволяет извлечь урок из истории человечества и одновременно призывает исключить геноцид из практики взаимоотношений между народами.